

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

6 ՀԱՎԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՂՍԱՑՄԱՆ

| | |
|---|--------|
| ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ..... | 6.1-2 |
| 6.1 Շրջակա միջավայրի գնահատման ընդհանուր մոտեցում..... | 6.1-3 |
| 6.1.1. Եզրույթների սահմանում..... | 6.1-4 |
| 6.1.2. Ծրագրի գործողությունները և հավանական ազդեցությունների հայտնաբերում..... | 6.1-5 |
| 6.1.3. Ընդհանուր մեթոդաբանություն | 6.1-6 |
| 6.1.4. Մեղմացման միջոցառումներ և մնացորդային ազդեցություններ ... | 6.1-9 |
| 6.2. Սոցիալական ազդեցություններին ուղղված ընդհանուր մոտեցում | 6.1-9 |
| 6.2.1. Ընդհանուր մեթոդաբանություն | 6.1-10 |
| 6.2.2. Սոցիալական ազդեցությունների դասակարգում | 6.1-10 |
| 6.2.3. Մշտադիտարկում և գնահատում | 6.1-12 |
| 6.3 Բնապահպանական և սոցիալական կոնկրետ ասպեկտներին առնչվող մեթոդաբանության կիրառումը..... | 6.1-12 |
| 6.3.1 Աշխատողներին կացարանով ապահովելու հետևանքով առաջացող ազդեցությունների գնահատում | 6.1-13 |

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

| | |
|---|-------|
| Աղյուսակ 6.1-1 Ընկալիչի զգայունության սանդղակ | 6.1-7 |
| Աղյուսակ 6.1-2. Փոփոխության ուժգնության սանդղակ | 6.1-7 |
| Աղյուսակ 6.1-3. Ազդեցությունների ուժգնության աղյուսակ | 6.1-8 |
| Աղյուսակ 6.1-4. Ազդեցության ուժգնության սանդղակ | 6.1-8 |

6 ՀԱՎԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՂՄԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Այս գլխում նկարագրվում են Ծրագրի բոլոր փուլերում (հանքի շինարարություն, շահագործում և փակում) առաջացող հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունները: Այստեղ բացահայտվում են Ծրագրի ենթակառուցվածքի հետ կապված ազդեցության աղբյուրները և Գլուխ 3-ում նշված գործողությունները: Այստեղ դիտարկվում են նաև Ծրագրի հետ կապված սոցիալական փոփոխությունների հետևանքով առաջացող ազդեցությունները, այդ թվում՝ աշխատողներին կացարանով ապահովելը, ուղղակի զբաղվածությունը, տնտեսական ներդրումները և ժողովրդագրական փոփոխությունները: Ազդեցությունները գնահատվում են՝ հաշվի առնելով ոլորտը կանոնակարգող համակարգը Բաժին 2.1 և 2.2-ում, Լիդիան ընկերության քաղաքականությունը Բաժին 2.3-ում, և Ծրագրի կոնկրետ չափանիշները, որոնք ներկայացված են Գլուխ 2-ի Բաժին 2.4-ում:

Գնահատումն իրականացվել է հետևյալ հիմնական ոլորտներում.

Բնապահպանական

- Ջերմոցային գազերի արտանետումներ և կլիմայի փոփոխություն,
- Լանդշաֆտ և վիզուալ ազդեցություն,
- Օդի որակ,
- Աղմուկ և վիբրացիա,
- Հողային ծածկույթ,
- Ստորգետնյա ջրեր,
- Մակերևութային ջրեր, և
- Կենսաբազմազանություն և էկոհամակարգեր:

Սոցիալական

- Սոցիալ-տնտեսական,
 - o Ժողովրդագրություն,
 - o Տնտեսական իրավիճակը,
 - o Աշխատանք և աշխատանքային պայմաններ,
- Կենսամիջոցներ
- Հողօգտագործում, գյուղատնտեսություն և բնական պաշարներ,
- Համայնքների բնակչության առողջություն և անվտանգություն,
- Մշակութային ժառանգություն,

- Տրանսպորտ,
- Էկոհամակարգի ծառայություններ, և
- Աշխատողներին կացարանով ապահովելու հետևանքով առաջացող ազդեցությունների գնահատում

Ծանոթագրություն. աշխատողներին կացարանով ապահովելու հետևանքով առաջացող ազդեցությունների գնահատման (տես Գլուխ 6.21) անդրադարձ կատարվել է ԲՄԱԳ-ի նախորդ գլուխներում, մասնավորապես՝ սոցիալ-տնտեսական, համայնքների բնակչության առողջության և անվտանգության, ինչպես նաև տրասպորտի բաժիններում: Այս գնահատումը ներկայացվել է որպես առանձին բաժին, քանի որ Գլուխ 5-ում և 5.9 բաժնում:

ԲՄԱԳ-ի շրջանակներում բնապահպանական ազդեցության գնահատման մեթոդաբանությունը տարբերվում է սոցիալական ազդեցության գնահատման մեթոդաբանությունից: Դրա պատճառը սոցիալական ուսումնասիրությունների համար անհրաժեշտ վերլուծության որակական բնույթն է՝ սոցիալական առումով հնարավոր զգալի դրական փոփոխության հետ մեկտեղ, որը պետք է իրականացվի Լիդիան ընկերության քաղաքականությունների և սոցիալական պլանների շրջանակներում: Դրան հակառակ, բնապահպանական ազդեցությունների համար սովորաբար կիրառվում են քանակական գնահատումների եղանակները՝ կապված հանքի նախագծմանն ու շահագործմանն առնչվող հարցերի հետ: Բացի այդ, ազդեցության մեղմացման միջոցառումներն իրականացնելիս հիմնականում շեշտը դրվում է կանխատեսված ազդեցությունների նվազեցման վրա, որոնք առանց համապատասխան ազդեցության մեղմացման միջամտության կհանգեցնեն զգալի բացասական ազդեցության: Հիմնվելով վերոնշյալի վրա՝ մշակվել են ազդեցություններն ամփոփող բաժիններ, որոնցում բնապահպանական և սոցիալական ասպեկտների համար կիրառվող ձևաչափերը տարբեր են: 6-րդ գլխի վերջում ներկայացվում է խնդրո առարկա յուրաքանչյուր ոլորտի համար մեղմացման միջոցառումների ամփոփ նկարագիրն ու աղյուսակը:

6.1 Շրջակա միջավայրի գնահատման ընդհանուր մոտեցում

Յուրաքանչյուր ոլորտ սովորաբար քննարկվում է ըստ ձևաչափի, որտեղ սահմանվում և նախատեսում է հետևյալը.

- **Ծրագրային գործողություններ** - Նկարագրվում են կոնկրետ որևէ ասպեկտի առումով հնարավոր ազդեցություն ունեցող ծրագրային գործողությունները և/կամ աղբյուրները:
- **Հնարավոր ազդեցություններ** – Նկարագրվում է այն մեթոդը, որը կիրառվում է յուրաքանչյուր ոլորտում գնահատելու համար հնարավոր ազդեցությունները, և բացատրվում են ցանկացած ենթադրություն կամ այստեղ նկարագրված ազդեցության գնահատման ընդհանուր մեթոդաբանության փոփոխությունները:
- **Ազդեցությունների մեղմացման միջոցառումներ** – Նկարագրվում է ազդեցություններն ընդունելի չափերի նվազեցնելու նպատակով ընդգրկված տեխնիկական նախագիծը:
- **Մնացորդային ազդեցություններ** – Մեղմացման միջոցառումների իրականացումից հետո վերագնահատվում է ազդեցության ուժգնությունը (ենթադրելով ազդեցության մեղմացման միջոցառումների արդյունավետ իրականացում):
- **Մշտադիտարկում և աուդիտ** - Մեղմացման միջոցառման արդյունավետությունը երաշխավորելու, ինչպես նաև Գլուխ 8-ում դիտարկվող իրական ազդեցություններն ընդունելի սահմաններում պահելու նպատակով անհրաժեշտ կլինի կոնկրետ սահմանված ժամանակահատվածի համար որոշել մշտադիտարկման մակարդակը:

Բնապահպանական ասպեկտները ամփոփվել են գնահատելով ուժգնությունը՝ հաշվի առնելով ուղղությունը, տևողությունը, ընկալիչի զգայունությունը և ուժգնությունը: Ուժգնությունը որոշվում է հանքի շինարարության և շահագործման փուլերում մեղմացման միջոցառումների իրականացմամբ կարճաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով՝ ապահովելով նաև մեղմացման միջոցառումների ամփոփ նկարագիր:

6.1.1. Եզրույթների սահմանում

<Ազդեցություն> և <հետևանք> եզրույթները հաճախ օգտագործվում են մեկը մյուսի փոխարեն, սակայն այս գլխում դիտարկվող բնապահպանական ուսումնասիրությունների համատեքստում այս եզրույթներն հատուկ իմաստներ ունեն:

<Ազդեցություն> եզրույթը կիրառվում է շրջակա միջավայրի որոշակի ասպեկտում (օրինակ՝ օդ կամ ջուր) տեղի ունեցած փոփոխության առումով, որը կարող է վերագրվել Ծրագրին: Հնարավորության դեպքում հաշվարկվում է փոփոխության աստիճանը:

< Հետևանք > եզրույթը կիրառվում է՝ նկատի առնելով հատուկ ընկալիչների համար սահմանված ելակետային պայմաններում փոփոխությունները: Ելակետային պայմաններում այս փոփոխությունների ուժգնության գնահատումը հիմնվում է ազդեցության ուժգնության և այդ փոփոխության նկատմամբ ընկալիչի զգայունության աստիճանի վրա:

Այսպիսով, առաջին դեպքում *ազդեցությունը* շրջակա միջավայրի ասպեկտների վրա Ծրագրի հետևանքով ելակետային վիճակի փոփոխության չափումն է: Երկրորդ դեպքում, < *հետևանք* > ասելով հասկանում ենք, թե որքան կարևոր է փոփոխությունը՝ ընկալիչի զգայունությունը հաշվի առնելով:

Ծրագրի ազդակիր տարածքը ներառում է Ծրագրի զբաղեցրած տարածքը (տես Նկար 1.2), ինչպես նաև շրջակա տարածքները, որոնք կարող են տուժել հանքի շինարարության, շահագործման և փակման ազդեցություններից:

6.1.2. Ծրագրի գործողությունները և հավանական ազդեցությունների հայտնաբերում

Ազդեցության գնահատման բնույթն ու դրա ուժգնության սահմանման համար ընտրված մեթոդաբանությունը հատկորոշվում են բնապահպանական յուրաքանչյուր ասպեկտի համար առանձին, բայց ընդհանուր շրջանակում:

Այն դեպքերում, երբ հնարավոր է կիրառել գնահատման քանակական եղանակը, ընտրվել է այնպիսի մոտեցում, որը թույլ կտա մոդելավորել շրջակա միջավայրը և հաշվարկել Ծրագրի գործողությունների հետևանքով առաջացող հնարավոր ազդեցության ուժգնությունը:

- Օրինակ՝ օդում արտանետումների տարածման սխեմաները և դրանց տարրալուծումը: Այն դեպքերում, երբ փոփոխության ուժգնությունը գնահատվել է թվային մոդելով, ազդեցության ուժգնությունը գնահատվել է Գլուխ 2-ում սահմանված չափանիշների հիման վրա:

Շրջակա միջավայրի մի շարք ասպեկտների դեպքում հնարավոր ազդեցության ուժգնությունը գնահատվել է որակական եղանակով:

- Օրինակ՝ <Լանդշաֆտ և վիզուալ ազդեցության գնահատում> բաժնում (Բաժին 6.5) ֆոտոմոնտաժի կիրառությունը հիմնվում է նախկինում ունեցած փորձի և կոնկրետ

գործողության հետևանքների մասին գիտելիքի վրա, և փորձագետի եզրակացությունն ուժգնության գնահատման հարցում վճռական դեր ունի:

Անհրաժեշտության դեպքում առանձին բաժիններում քննարկվել են ազդեցությունների գնահատման մեթոդաբանության մանրամասները:

Ազդեցություններ գնահատման վերաբերյալ գլուխներից ստացված կանխատեսումները որոշ չափով անորոշություն են պարունակում: Յուրաքանչյուր թեմայում բացատրվում է այդ անորոշությունը բոլոր այն ենթադրությունների հետ միասին, որոնց վրա դրանք հիմնվում են:

6.1.3. Ընդհանուր մեթոդաբանություն

Ուժգնության աստիճանը որոշելու համար կիրառվող չորս հատկությունները սահմանվում են ստորև.

Ուղղություն

- Դրական ազդեցություն**-Այն ազդեցությունն է, որը համարվում է ընկալիչին զուտ օգուտ բերող ազդեցություն:
- Բացասական ազդեցություն**-Այն ազդեցությունն է, որը համարվում է ընկալիչի վրա բացասաբար ազդող, և որի մեղմացման համար հնարավոր է հատուկ կառավարման գործողություններ պահանջվեն:

Տևողություն

Ծրագրի հետ կապված հնարավոր ազդեցությունները կարող են լինել կարճաժամկետ և երկարաժամկետ, որոնք սահմանվել են բնապահպանական յուրաքանչյուր ասպեկտի համատեքստում՝ հաշվի առնելով ընկալիչը: Այդուհանդերձ, բնապահպանական ասպեկտների մեծ մասի դեպքում կարճաժամկետ սահմանվել է Ծրագրի շինարարության և/կամ շահագործման հետ կապված (այսինքն՝ մինչև 13 տարի), իսկ երկարաժամկետ ազդեցությունները այն ազդեցություններն են, որոնք մնում և շարունակվում են Ծրագրի փակման փուլից հետո:

Ընկալիչի զգայունություն

Ընկալիչի զգայունությունը ներկայացված է Աղյուսակ 6.1.1-ում

| Աղյուսակ 6.1-1 Ընկալիչի զգայունության սանդղակ | | |
|--|--------------------------------|---|
| | Ընկալիչի զգայունություն | Ընկալիչի նկարագրություն |
| 1 | Թեթևակի | Ոչ էական/ ցածր զգայունության ընկալիչ, Ընկալիչի լայն տարածվածություն, տեղական մակարդակով ուժգնություն կամ մասշտաբ, փոփոխության նկատմամբ ճկունություն, տեղական տարածքներում փոխարինման հնարավորություն |
| 2 | Միջին | Ցածրից միջին ուժգնություն/ցածրից միջին զգայունության ընկալիչ, համեմատաբար լայն տարածվածություն ունեցող, մարզային մակարդակով ուժգնություն կամ մասշտաբ, փոփոխության նկատմամբ բավարար ճկունություն, փոխարինման հնարավորություն |
| 3 | Բարձր | Միջինից բարձր ուժգնություն/միջինից բարձր զգայունության ընկալիչ, համեմատաբար հավաքակա, պետական մակարդակով ուժգնություն կամ մասշտաբ, փխրուն և փոփոխության նկատմամբ դյուրագգաց, փոխարինման սահմանափակ հնարավորություն |
| 4 | Շատ բարձր | Շատ բարձր ուժգնություն/շատ բարձր զգայունության ընկալիչ, չափազանց հավաքակա, միջազգային մակարդակով ուժգնություն կամ մասշտաբ, շատ փխրուն, փոփոխության նկատմամբ շատ դյուրագգաց, փոխարինման շատ սահմանափակ հնարավորություն |
| Նշում. Աղյուսակում ընկալիչի նկարագրությունը ներկայացված է իր աշխարհագրական տարածման հետ միասին: Աղյուսակ 6.1.1-ում կիրառված ընդհանուր նկարագրությունները մշակվել են բնապահպանական յուրաքանչյուր ասպեկտի համար՝ հաշվի առնելով կատարողականի համապատասխան կիրառելի չափորոշիչները: | | |

Ուժգնություն

Փոփոխության ուժգնությունը ներկայացված է Աղյուսակ 6.1.2-ում

| Աղյուսակ 6.1-2. Փոփոխության ուժգնության սանդղակ | | |
|--|---------------------------------|--|
| | Փոփոխության ուժգնություն | Փոփոխության նկարագրություն |
| 1 | Չնչին | Ելակետային ռեսուրսներում նվազագույն տեսանելի փոփոխություններ: Փոփոխությունները կամ կարճատև են կամ ոչ հաճախակի, այնպես որ հնարավոր ազդեցության կառավարման համար ուղղակի վերահսկողություն չի պահանջվում: |
| 2 | Ցածր | Ելակետային վիճակի կամ ռեսուրսների տեսանելի փոփոխություն: Հանքի շինարարության և շահագործման ընթացքում ելակետային պայմանների հիմքում ընկած առանձնահատկություններում և որակում շարունակական փոփոխություններ կլինեն: |
| 3 | Չափավոր | Փոփոխության աստիճանն այնպիսին է, որ տեղի կունենա շրջակա միջավայրի կոնկրետ ռեսուրսների ելակետային պայմանների |

| | | |
|---|-------|---|
| | | կորուստ կամ բացասական փոփոխություն: Հանքի շինարարության և շահագործման փուլերում կառուցապատմանը հաջորդող բնութագիրն ու որակը մասամբ կփոխվեն: |
| 4 | Բարձր | Փոփոխության աստիճանն այնպիսին է, որ տեղի կունենա շրջակա միջավայրի կոնկրետ ռեսուրսների ելակետային պայմանների ամբողջական կորուստ կամ բացասական փոփոխություն: Կառուցապատմանը հաջորդող բնութագիրն ու որակը սկզբունքորեն և անվերադարձ կփոխվեն: |

Ուժգնության գնահատում

<Ընկալիչի զգայունություն> (Աղյուսակ 6.1.1) և <Փոփոխության ուժգնություն> (Աղյուսակ 6.1.2) աղյուսակների որակական նկարագրությունների կիրառմամբ կազմվել է սանդղակ՝ ստանալու համար Ազդեցության ուժգնության աղյուսակ (Աղյուսակ 6.1.3)

| Ընկալիչի զգայունություն | Փոփոխության ուժգնությունը | | | |
|-------------------------|---------------------------|---------|---------|-----------|
| | Չնչին | Ցածր | Չափավոր | Բարձր |
| Թեթև | Չնչին | Չնչին | Թեթև | Չափավոր |
| Միջին | Չնչին | Թեթև | Չափավոր | Չափավոր |
| Բարձր | Թեթև | Չափավոր | Զգալի | Զգալի |
| Շատ բարձր | Թեթև | Չափավոր | Զգալի | Շատ բարձր |

Ուժգնության մակարդակների առավել մանրամասն սահմանումները ներկայացված են Աղյուսակ 6.1.4-ում՝ նշելով, թե երբ ազդեցությունները կարող են համարվել կարևոր:

| | Ուժգնություն | Ազդեցության նկարագրություն (զգայունություն և ուժգնություն) | Հետևանք |
|---|--------------|---|----------|
| 0 | Դրական | Ընկալիչին զուտ օգուտ է բերում | Դրական |
| 1 | Չնչին | Ընկալիչը մտահոգություն չունի կամ փոփոխության չի ենթարկվում կոնկրետ գործողության արդյունքում, համարյա չի տարբերվում բնական ֆոնի տարբերակներից: | Ոչ էական |
| 2 | Թեթևակի | Ընդունված սահմաններում է և համապատասխանում է ընդունված չափանիշներին, ազդեցությունը նկատելի է ընկալիչի վրա, բայց այնքան փոքր է, որ մտահոգություն չի առաջացնում | Ոչ էական |
| 3 | Չափավոր | Ընդունված սահմաններում է և համապատասխանում է ընդունված չափանիշներին, բայց համարյա հասնում | Էական |

| | | | |
|---|-----------|--|-------|
| | | Է թույլատրելի առավելագույն շեմին, բարձր ուժգնության փոփոխություններ հարաբերականորեն ոչ զգայուն ընկալիչների վրա, ցածր ուժգնության փոփոխություններ բարձրից շատ բարձր զգայունության ընկալիչների վրա | |
| 4 | Զգալի | Ընդունելի սահմաններն ու չափանիշները գերազանցվել են, բարձրից շատ բարձր զգայունության ընկալիչների վրա ազդող բարձրից չափավոր ուժգնության փոփոխություններ | Էական |
| 5 | Շատ բարձր | Չափազանց հազվագյուտ կամ եզակի ընկալիչի ամբողջական կորուստ կամ բացասական փոփոխություն, ազդեցությունը հնարավոր չէ մեղմացնել | Էական |

6.1.4. Մեղմացման միջոցառումներ և մնացորդային ազդեցություններ

Կարևոր գնահատված բացասական ազդեցությունները պետք է մեղմացվեն՝ մնացորդային ազդեցության ուժգնության աստիճանը կրճատելու նպատակով: Անհրաժեշտ է նաև մշտադիտարկման միջոցառումներ մշակել մեղմացման միջոցառումների արդյունավետությունը գնահատելու համար:

Մեղմացման միջոցառումների կիրառումից հետո հնարավոր ազդեցությունները վերագնահատվում են Ծրագրի գործողություններից բխող մնացորդային ազդեցությունները հայտնաբերելու համար: Այս գնահատումը հիմնվում է այն նույն մեթոդաբանության և Ազդեցության ուժգնության աղյուսակի վրա, որը կիրառվում է մեղմացման չենթարկված ազդեցությունների գնահատման համար: Մնացորդային հետևանքը որոշվում է որպես ազդեցության արդյունք՝ համապատասխան ռիսկերի վերլուծությամբ՝ հիմնվելով հնարավոր ազդեցության մեղմացման միջոցառումների արդյունավետության հաշվետուգմանն ուղղված մշտադիտարկման համալիր միջոցառումների վրա:

6.2. Սոցիալական ազդեցություններին ուղղված ընդհանուր մոտեցում

Ի տարբերություն բնապահպանական ազդեցությունների գնահատման, սոցիալական ազդեցությունների դեպքում <ազդեցություն> և < հետևանք> եզրույթների կիրառման տարբերակում չկա, և այս լույսի ներքո ընդունված մեթոդաբանությունը ներկայացված է ստորև: Սոցիալ-տնտեսական ասպեկտներն ամփոփվել են՝ նկարագրելով փոփոխության ուղղությունը, ուժգնությունը, տարածական ընդգրկումը, տևողությունը և ազդեցությունը մինչև դրա մեղմացումը և մեղմացումից հետո:

6.2.1. Ընդհանուր մեթոդաբանություն

Սոցիալ-տնտեսական ազդեցության ուժգնությունը որոշելու համար կիրառվող 4 հատկանիշները.

- **Ուղղություն**-ցույց է տալիս՝ արդյոք ազդեցությունը դրական է, բացասական, թե չեզոք: Որոշ ազդեցություններ կարող են ունենալ խառը ուղղություն՝ ինչպես դրական, այնպես էլ բացասական, որի պատճառով մեղմացման միջոցառումներից առաջ նրա վերաբերյալ կանխատեսումը կլինի <չեզոք>:
- **Ուժգնություն**-ցույց է տալիս որևէ սոցիալական բնութագրիչում փոփոխության աստիճանը: Այս գնահատումը սովորաբար որակական է:
- **Աշխարհագրական տարածում**-նշում է այն աշխարհագրական և վարչական միավորները, որոնք ազդեցություն են կրելու: Որոշ դեպքերում ազդեցությունը կարող է տարածվել միայն առանձին տնային տնտեսությունների վրա, իսկ այլ դեպքերում տեղական տարածքների և մարզերի, ողջ երկրի, ինչպես նաև ազդեցությունները կարող են ունենալ միջազգային բնույթ:
- **Տևողություն**-ցույց է տալիս այն ժամանակահատվածը, որի ընթացքում ազդեցությունն առկա է: Տևողությունը սովորաբար կապված է ծրագրի նկարագրության հետ. կարճաժամկետ ազդեցությունները վերաբերում են մինչշինարարական և շինարարական փուլին, միջնաժամկետ ազդեցությունները՝ հանքի շինարարության, շահագործման և փակման փուլերին, իսկ երկարաժամկետ ազդեցությունները՝ Ծրագրի ավարտին հաջորդող տարրերին:

6.2.2. Սոցիալական ազդեցությունների դասակարգում

Սոցիալական ազդեցությունների դասակարգումը դիտարկվում է Աղյուսակ 6.2.1-ում:

| Աղյուսակ 6.2.1. Սոցիալական ազդեցությունների դասակարգում | |
|---|--|
| Չափանիշներ | Սահմանում |
| Ուղղություն | Դրական- ազդեցությունը գուտ օգուտ է բերում ազդակիր անձին/անձանց |

| Աղյուսակ 6.2.1. Սոցիալական ազդեցությունների դասակարգում | |
|--|---|
| Չափանիշներ | Սահմանում |
| | <p>Բացասական-ազդեցության արդյունքում ազդակիր անձը/անձինք զուտ կորուստ են կրում</p> <p>Խառը տիպի ազդեցությունը կարող է դրական կամ բացասական լինել, բայց անհրաժեշտ է միջամտություն, որպեսզի այն զուտ օգուտ բերի</p> <p>Չեզոք-ազդակիր անձը/անձինք ոչ զուտ օգուտ են շահում և ոչ էլ զուտ վնաս կրում:</p> |
| Ուժգնություն | <p>Չնչին-նկատելի փոփոխություն չի նախատեսվում</p> <p>Ցածր-կանխատեսվող արդյունքը տարբեր կլինի ելակետային պայմաններից, բայց ոչ այնքան, որ վատացնի կամ փոխի ազդակիր անձի/անձանց կյանքի որակը</p> <p>Չափավոր-կանխատեսվող արդյունքում ազդակիր անձի/անձանց կյանքի որակը կվատանա կամ կշահի ազդեցությունից</p> <p>Բարձր- կանխատեսվող արդյունքում ազդակիր անձի/անձանց կյանքի որակը լրջորեն կվատանա կամ կբարելավվի ազդեցությունից:</p> |
| Աշխարհագրական տարածում | <p>Անհատական-ազդեցությունը սահմանափակվում է անհատներով կամ առանձին տնային տնտեսություններով, տեղական- ազդեցությունը սահմանափակվում է տեղական տարածքներով,</p> <p>մարզային- ազդեցությունը սահմանափակվում է մարզի տարածքով,</p> <p>ազգային-ազդեցությունը տարածվում է ազգային մակարդակում, միջսահմանային-ազդեցություն են կրում տարածաշրջանի հարևան երկրները:</p> |
| Տևողություն | <p>Կարճաժամկետ-ազդեցություն առկա է հանքի շինարարության և շահագործմանը նախորդող փուլում,</p> <p>միջնաժամկետ-ազդեցություն առկա է շինարարության և շահագործման փուլերում,</p> <p>երկարաժամկետ- ազդեցություն առկա է հանքը շահագործումից հանելուց և դրա փակումից հետո:</p> |

Սոցիալական ազդեցության յուրաքանչյուր դաս և ենթադաս պետք է գնահատվի՝ հաշվի առնելով բոլոր չորս չափանիշները: Անհրաժեշտ է գնահատում իրականացնել մեղմացման կամ օգուտի մեծացման միջոցառումները դիտարկելուց առաջ: Գնահատումն իրականացնելիս պետք է հաշվի առնել բոլոր չորս չափանիշները՝ գնահատելու համար ուժգնության աստիճանը ըստ բնապահպանական ազդեցությունների գնահատման գործընթացում կիրառվող <չնչինից> մինչև <շատ բարձր> մակարդակի: Ազդեցության կառավարման արդյունքում նախատեսվող փոփոխությունը ցույց տալու նպատակով անհրաժեշտ է մեղմացումն ու օգուտի մեծացումը նկարագրելուց հետո վերագնահատել ազդեցության դասը կամ ենթադասը: Բացի նրանից, որ սոցիալական ազդեցությունների

դասակարգումը հիմնականում որակական բնույթ է կրում, կանխատեսումների հիմնավորումը շահառուների և այլ դիտողների համար պետք է թափանցիկ լինի:

6.2.3. Մշտադիտարկում և գնահատում

Կարևոր է հատուկ գործընթաց մշակել ազդեցության մեղմացման գործողությունները կանոնավոր կերպով մշտադիտարկելու և ընդունված կարգի համաձայն դրանք պարբերաբար գնահատելու համար: Մշտադիտարկման արդյունքները կիրառարկվեն, և շահառուները պարբերաբար՝ սովորաբար առնվազն տարին մեկ անգամ, դրանց վերաբերալ հետադարձ կապի հնարավորություն կունենան: Մշտադիտարկման պահանջները սահմանվում են որպես ազդեցության յուրաքանչյուր դասի կոնկրետ մաս: Մեղմացման գլխավոր միջոցառումները և դրանց զուգակցող մշտադիտարկման պարտավորությունները կազմում են Բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգի սոցիալ-տնտեսական բաժինների հիմքը:

6.3 Բնապահպանական և սոցիալական կոնկրետ ասպեկտներին առնչվող մեթոդաբանության կիրառումը

Ազդեցության գնահատման յուրաքանչյուր բաժնում մոտեցման և մեթոդաբանության կիրառումը դիտարկվել է՝ հատուկ կերպով հաշվի առնելով Հայաստանի օրենսդրության պահանջները, ՄՖԿ-ի կատարողական համապատասխան ստանդարտը, ՎՋԵԲ-ի Կատարողական պահանջը և այլ համապատասխան չափանիշները և/կամ ոլորտին առնչվող նպատակները: Ի լրումն վերը շարադրված բնապահպանական և սոցիալական ընդհանուր ազդեցությունների գնահատման մեթոդաբանությանը, կիրառվել են նաև հատուկ մեթոդներ լանդշաֆտի և վիզուալ ազդեցության, կենսաբազմազանության, համայնքի առողջության և անվտանգության, տրասնպորտի ոլորտի և մշակութային ժառանգության վրա ազդեցությունների գնահատման համար, որոնք մանրամասն նկարագրվում են համապատասխան բաժիններում:

Ազդեցությունների ուժգնության սահմանումը հիմք է ծառայել մեղմացման համապատասխան ռազմավարությունների մշակման համար, որի ընթացքում հստակեցվել են կառավարման պլանների անհրաժեշտությունն ու կիրառության շրջանակը: Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի (ԲՄԿՊ) կառուցվածքը և դրան ուղղված մոտեցումը դիտարկվում է Գլուխ 8-ում: Ծրագրի շահագործման ողջ ընթացքում նշված հետևանքների/ազդեցությունների կառավարման և մեղմացման ռազմավարությունը ներառվել է Ամուլսարի ոսկու հանքի ծրագրի համար Լիդիան ընկերության մշակած Բնապահպանական և սոցիալական կառավարման

համակարգում, ինչպես նաև Աշխատանքի առողջության և անվտանգության կառավարման համակարգում: Երկու համակարգերը միասին ապահովում են առողջության, անվտանգության, բնապահպանական և համայնքային պահանջների արդյունավետ կատարում, այսինքն՝ շրջակա միջավայրի պահպանում, բնական պաշարների արդյունավետ օգտագործման շարունակական բարելավում, շրջակա համայնքների կյանքի որակի վրա դրական ազդեցության ապահովում և վնասվածքների և աշխատանքի ընթացքում ձեռք բերվող հիվանդությունների կանխարգելում:

6.3.1 Աշխատողներին կացարանով ապահովելու հետևանքով առաջացող ազդեցությունների գնահատում

Աշխատողներին կացարանով ապահովելու համար որդեգրած մեթոդաբանությունը մեծապես հիմնված է ԲՍԱԳ-ի այլ բաժիններում ընդունված սկզբունքների վրա, սակայն, քանի որ սա հատուկ ուսումնասիրություն է, գնահատման համար կիրառվող մեթոդաբանությունը բաժնում ներկայացված է ամբողջությամբ: